ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2024 թվականի թիվ 323 - Ա

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2323-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱԿԱՀԵՂԵՂԱՅԻՆ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1800-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 15 նոյեմբերի 2024 թվականի թիվ 1800-Ն որոշումը՝

որոշում եմ

1. Ստեղծել հանձնաժողով՝ ««Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և հակահեղեղային անհետաձգելի միջոցառումներ իրականացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 1800-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների կազմակերպման նպատակով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ հետևողականություն դրսևորել Աղստև գետի հունի մաքրման ընթացքում դուրս բերված քարերը և ծառերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից հաշվառված ծավալներին համապատասխան հետագայում Իջևան և Դիլիջան համայնքների կողմից տիրապետելու և օգտագործելու նկատմամբ:

3. Դիլիջան և Իջևան համայնքների ղեկավարներին՝ հետագայում լիարժեք տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու նպատակով հատկացնել համապատասխան տարածքներ Աղստև գետի հունի մաքրման ընթացքում դուրս բերված քարերի, ծառերի, կտրտված և արմատահանված թփուտների և շին աղբի կուտակման համար:

4. Հանձնաժողովի նախագահին՝ Աղստև գետի խնդրահարույց հատվածների մաքրման և հակահեղեղային միջոցառումների ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ 10-օրյա պարբերականությամբ տեղեկատվություն ներկայացնել ինձ և արդյունքների ամփոփումից հետո 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ներկայացնել մանրամասն հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-11-26 11:53:14 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ք. Իջևան
25 նոյեմբերի 2024թ.

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի 2024 թվականի

25 նոյեմբերի թիվ 323 –Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Նարեկ Ղուշչյան – հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ

Աղաբեկ Գալստյան – հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ,

Արկադի Ամիրխանյան - հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ,

Միսակ Մելքումյան - հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ,

Ասքանազ Բաբլումյան - հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ,

Տավուշ ՋՕԸ /համաձայնությամբ/,

ԲԸՏՄ Տավուշի տարածքային բաժին /համաձայնությամբ/,

Դիլիջան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/,

Իջևան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

26.11.2024

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241